ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 60 - Ա
14 մարտի 2014 թ.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Մարզի համայնքների գերեզմանատներում առկա իրավիճակը շտկելու համար իրականացվելիք միջոցառումների կատարումն ապահովելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Բիձյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի վարիչ, խմբի ղեկավար

Ղազարյան Ն. - մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ

Ղուլոյան Հ - մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի վարիչ

Օհանյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի վարիչ

Խաչատրյան Ս. - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ

Բաղոյան Մ. - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի առաջատար մասնագետ

2. Աշխատանքային խմբին՝ ապահովել սույն կարգադրությամբ նախատեսված միջոցառումների իրականացումն ըստ ժամանակացույցի և կատարված աշխատանքների մասին տեղեկատվությունն եռամսյա պարբերականությամբ ներկայացնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա.Հակոբյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ